

բոլոր նստարանին ձախակողմեան առաջին տեղը կամ ծայրն էր (Դար. Ա, 1274, '78). եւ այս համեմատութեամբ՝ գուցէ մեր անջատ բազմականաց մէջ ալ նոյն կողմէն առաջինը: Եւ որովհետեւ կոչնականք պատուոյ կարգով պիտի նստին, ուստի հոս կը բազմի անոնց մէջ աւագագոյնը կամ «գահերէցը» (Փիլ. Ճոք. 27): Յունաց քով, եւ անշուշտ մեր ալ, հաւասարապատիւ հիւրոց մէջ նախաթոռ կը կարծուի կոչնատէրն իսկ (Դար. Ա, 1273-4), որ սակայն աւելի բարձր կամ յարգելի անձի մը ներկայութեանն անոր կու տայ իւր տեղը (անդ, 1279): Այս փոխանակութեան օրինակները մեր քով ալ պիտի տեսնենք: Իսկ միւս բազմականք իրենց աստիճանին համեմատ կը բռնեն «զիւրաքանչիւր տեղի» (Եղիշ. 132):

Արքունի տաճարին մէջ բնականապէս միշտ ի զլուխ կը բազմի թագաւորն՝ «արքունական գահոյից» վրայ (աստ, 54): Այն շրջանին՝ ուր կար տէրութեան մեծ պաշտօնակալը՝ «Երկրորդ թագաւորութեանն» կոչուած (Խոր. 77), արքային քով նա կը բռնէր «գգահն երկրորդական», ինչպէս էր Արգամ՝ Արտաշիսի օրով (նոյն, 124): Յետոյ երբ կը դադրի այդ պաշտօնը, Տըրդատայ սեղանին վրայ կը տեսնենք «զո-